Արձանագրություն

Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2023 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների

29.01.2024 թ., ք. Հրազդան

Սույն արձանագրությունը կազմվում է առ այն, որ 2024 թ. հունվարի 29-ին, ժամը 11:30-ին Հրազդանի համայնքապետարանում տեղի ունեցավ Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2023 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Ներկայացրեց՝

Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ - զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանը:

Քննարկմանը մասնակցում էին՝

1. Հրազդանի համայնքապետարանի ներկայացուցիչներ
2. Բնակիչներ

Թվով՝ 19 հոգի:

Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ - զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանը ներկայացրեց Հրազդանի զարգացման ծրագրի 2023 թվականի կատարողական հաշվետվության նախագիծը՝ ըստ ծրագրերի. մանրամասն ներկայացվեց համայնքում 2023 թվականին իրականացված լայնածավալ աշխատանքներն ու դրանց արժեքները՝ ըստ համայնք-պետություն մասնաբաժինների: Վ. Բարեղամյանը ներկայացրեց զարգացման ծրագրում ներառված թվով 16 ծրագրերը. վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ իրականացվել են թե արվեստի, երաժշտական դպրոցներում ու դրամատիկական թատրոնում, թե սպորտդպրոցում ու մանկապարտեզներում: Սուբվենցիոն ծրագրի շրջանակում իրականացվել են թիվ 4,8,6,11 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներ՝ համայնք-պետություն համաֆինանսավորմամբ, որպես 3-րդ ներդրող կողմ ներգրավվել է նաև ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը՝ ներդնելով 55 370 752 դրամ: Ծրագրերը դեռ ընթացքի մեջ են, սակայն տվյալ ծրագրի շրջանակում իրականացվել է թիվ 15 մանկապարտեզի կոյուղու վերակառուցման աշխատանքները՝ 7 928 000 դրամ, համայնք-պետություն համաֆինանսավորմամբ: Բնապահպանական ծրագրով կատարվել են թիվ 9 պանկապարտեզի պատուհանների փոխարինման աշխատանքներ՝ 19 299 600 դրամ ընդհանուր արժեքով, որից համայնքի մասնաբաժինը՝ 4 396 520 դրամ: Կատարվել է նաև անսարք վերելակների գույքագրում,

ուսումնասիրում, առաջնահերթության գնահատում,վերանորոգում՝ նշելով, որ համայնքում կա չգործող 26 վերելակ, որից 5-ը բեռնատար: Իրականացվել են տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ բնակիչներին տրամադրելով թիթեղ՝2896.756քմ, իզոգամ՝ 1500 քմ: Ձեռք է բերվել 18 հատ LED լուսատու, կատարվել են ընթացիկ աշխատանքներ: Ձեռք է բերվել նաև 120 հատ եղևնի, 120 հատ գնդաձև ակացիա՝ համայնքի տարածում ծառատնկման աշխատանքներ իրականելու նպատակով:

Հնչեց հարց բակային ասֆալտապատման ու տարածքների բարեկարգման մասով, որին ի պատասխան Վ. Բարեղամյանը նշեց, որ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հնարավորինս կրճատվում է անբարեկարգ բակային տարածքների թիվը, և բարեկարգման աշխատանքները կրում են շարունակական բնույթ՝ ներառվելով 2023-2026թթ ծրագրերում:

Հարց հնչեց աղբահանության ու շենքերում առկա աղբատար խողովակների մասին: Հարցին ի պատասխան՝ նշվեց, որ արդեն 2024 թվականին շահագործման կհանձնվի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրը, որի արդյունքում աղբատար խողովակները կփակվեն, իսկ համայնքի ողջ տարածքում կտեղադրվեն նոր աղբամաններ: